

կուած էր կրօնական այլաբանութամբը նկարեալ կողքով մը : Ծերը քիչ մը ժամանակ դիտեց զանոնք, և ըստու . « Արուեստներուն ամենէն մեծ պաշտօնն է յիշեցրնել հոգւոյն ամենէն դերագոյն բանը, և մարդուս սրտին ամենէն աւելի սրբազն բանը » : Եւ զբեց այս վճռո՞ր որ արդէն հոչակեալ է բոլոր արևելից մէջ .

Մեծ գետերը, մեծ ծառերը, օգտակար տուն կերը և բարի մարդիկը իրենց համար չեն ծնանիր, այլ ուրիշներուն պիտանի ըլլալու համար :

Իր շարունակուի :

**ՀԻՆԳ ՇԱԲԱԹ ՕԴԱՊԱՐԿԻ ՄԷՋ
ՃԱՆԱԳԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՐԻՑ ԱՆԴՎԱՑԻՑ
ՅԱՓՐԻԿԵ**

(86-րեւ 218)

ԳԼՈՒԽ ԺԲ.

Նեղուցին անցքը . — Մրիման . — Խորհուրդ Տիրի և առաջարկուրին ձոյի . — Մրահ նուխայն . — Ռոզարամոն . — Եղկելին Մէջան . — Տուրումի լսոր . — Տոքորին աշխարհացոյքն . — Նոփալ ծասի մը վրայ անցուցած զիշեր մը :

Պարզ օդ մըն էր և հովը չափաւոր . Վիկուրիան գրեթէ ուղղահայեցաբար 1,500 ոտք բարձրութեամբ վեր ելաւ, զոր ծանրաչափին սիւնակը 2 թթաչափէ 2 զծաչափ՝ նուազ ճընշմամբ մը նշանակեց :

Այս բարձրութեանս մէջ օդու աւելի զգալի հոսանք մը զօդապարիկը դէպ 'ի հարաւային արևմտեան կողմը տարաւ : Ի՞նչ գեղեցիկ տեսարան կը բացուէր ճանապարհորդաց աչացը առջին : Զան զիպար կղզին ամբողջ մեծութեամբն իրենց տեսութեանը կը ներկայանար, և ինչպէս ընդարձակ մակարդակագնտի մը վրայ՝ աւելի մոյզ գոյնովը դուրս կը ցատքէր . դաշտերը գոյնզգոյն մանրանկար կտորներու երևոյթ կ'առնուին .

1 Գրեթէ հինգ հարիւրորդամեդր : Խւրտանչւոր հարիւր մեգր բարձրութիւն, մէկ հարիւրորդամեդր ձնչման կը համապատասխանէ :

անտառները և ծառաստանները՝ իբր մեծ փունջք ծառոց կ'երենային :

Կղզւոյն բնակիչքը կարծես թէ միջատք էին : Հուռուաները և աղաղակները կամաց կամաց ընդարձակ միջնոլորտին մէջ մարելով, միայն նաւուն թնդանօթից հարուածները օդապարկին ստորին գոգաւորութեանը վրայ կը թրթռային :

— Ի՞նչպէս գեղեցիկ է այդ ամենը, կանչեց ձոյ, ինքը նախ լուռթիւնը կոտրելով : Սակայն իրեն պատասխան տուող մը չեղաւ : Տոքորը ծանրաչափին կրած տարբերութիւնները դիտելու զբաղած էր, նշանակելով միանգամայն իր վեր ելելու մանրամասն տեղեկութիւնները :

Քէննըտին ուշադիր չորս դին կը նայէր և կարծես թէ աչքերը չէին բաւեր բոլորը տեսնելու :

Արեւուն ճառագայթները բոցարծարծին օգնելով, կազին ձգտումը սաստկացաւ, և վիկուրիան 2,500 ոտք բարձր ելաւ : Այն բարձրութենէն Ռիզուիուդը ինչպէս պղտի նաւակ մը կ'երեար, և Ավրիկիոյ ծովափը յատակ կերպով կ'որոշուէր, արևմտեան դին փրփուրէ անհուն երիզով մը :

— Զէք խօսիր, կանչեց ձոյ :

— Կը դիտենք, պատասխանեց տոքորը, դիտակը դէպ 'ի ցամաք երկիրը ուղղելով :

— Այլ հարկ է որ խօսիմ :

— Հանգիստ նայէ, ձոյ . որչափ կ'ուղես խօսէ :

Անոր վրայ ձոն սկսաւ ինքնիրեն անուանաստեղծութեանց զարհուրելի ցուցակ մը ստեղծել : Ո՛հերը, ահերը, վաշերը շրթանցը մէջ կը շառաչէին :

Ծովուն անցքին ժամանակը տոքորը պատշաճ սեպեց ինքզինքը այս բարձրութեանը մէջ բռնել, վասն զի կը նար անով ծովեղերքին աւելի ընդարձակ տեղը դիտել . Ներմաշափին ու ծանրաչափը, որ կիսաբաց վրանին ներսը կախուած էին, անդաղար իր աչքին տակն էին . ուրիշ երկրորդ ծանրաչափ մըն ալ դուրս կախուած էր, որ զիշերուան քառորդներուն պիտոր ծառայէր :

Երկու ժամէ ետքը վիկտորիան ութը մղոնէն քիչ մը աւելի երադութեամբ մղուելով, զգալի կերպով դէպ 'ի ծովեղերը յառաջեց։ Տոքորը որոշեց ցամաքին մօտենալու։ Բոցարձարձին բոցը նուազեցուց, և օդապարիկը քիչ ատենուան մէջ գետնէն 300 ոտք բարձրութեամբ վար ինչաւ։

Այս ատենս Մըրիմային վրայ կը գըտնուէր, ինչպէս կը կոչուի Ափրիկիոյ արևելեան ծովափին այս կտորը։ մանկիէի տեսակ ծառոց թանձր շրջանակներ՝ անոր եղերքները կը պաշտպանէին։ ծովուն տեղատութեան ժամանակն ըլլալով, անոնց հաստ արմատները չնդկային ովկիանոսին սպառիչ ատամուկներէն մաշած կ'երևնային։ Աւազակոյտք, որ երբեմն ծովափանց սահման էին՝ հորիզոնին վրայ շրջաբոլոր կերպարանք մը կ'առնուին, մինչդեռ նկուրու լեռը հիւսիսէն դէպ հարաւ ակողմը՝ իր սրածայր գագաթովը կանգուն կ'ամբառնար։

Վիկտորիան գեղի մը քովէն անցաւ, զոր տոքդորը՝ աշխարհացուցին վրայ վնտուելով գտաւ որ Քաօնն էր։ Բոլոր ժողովուրդը մէկ եղած՝ կերքի ու վախի ահաւոր ձայններ կը հանէին։ այլ պարագ տեղնետեր կ'արձրկէին այն օդային հրէշին դէմ, որ վայելուչ կերպով մը բոլոր այն անկարող կատաղեաց վրայ կը ճօճէր։

Հովք դէպ 'ի հարաւ կը քշէր զօդապարիկը, սակայն տոքդորը այս ուղղութեանս համար ամենեին անհոգ էր։ Վասն զի անով կրնար Պըրդըն ու Մըրիք գնդապետաց ցուցած ճամբուն հետելի։

Վերջապէս Քէննըտիին վրայ ալ ձոյին շատխօսութիւնը գալով սկսան փոխն 'ի փոխ իրենց զարմացական խօսքերը մէկմէկու ուղղել։

— Վաշ ճեպընթացից, կ'ըսէր մէկը։

— Վաշ շոգենաւուց, կը պատասխանէր միւսը։

Վաշ շոգեկառաց, կ'ըսէր դարձեալ Քէննըտի, որոնցմով մարդ աշխարհք կը քալէ առանց բան մը աեսնալու։

— ինծի օդապարիկը զուրցէ, կ'ըսէր դարձեալ ձոյ։ մարդ չմանար որ կը քալէ, և բնութիւնը ինքնիրեն իր աշաց առջին կը պարզի։

— Ի՞նչ տեսարան։ ինչ հրաշալիք։ ինչպիսի հիացում. առկախեալ¹ խշտի մը մէջ երազ մըն է։

— Ի՞նչ աղէկ կ'ըլլար թէ որ նախաճաշիկ ընէինք, ըսաւ ձոյ, որուն ախորժակը զբգուուեր էր բաց օդուն ազգեցութենէն։

— Երեւակայութիւն է, տղայս։

— ԱՇ, երկայն խոհակերութիւն ընելու պէտք չկայ. պաքսիմատ և պահծու միս։

— Առատ ալ սուրճ, յաւել ըսելու տոքդորը։ Քեզի հրաման ալ որ բոցարձարձէս քիչ մը ջերմութիւն փոխ առնուս, որ աւելիով ալ ունի։ Այս կերպով հրդեհէ ալ վախ չենք ունենար։

— Զարհուրելին բան կ'ըլլար, ըսաւ Քէննըտի։ Գլխընուս վրայինը վառողի համբարանոց մը կը նմանի։

— Բոլորովին ատանկչէ, պատասխանեց Ֆէրկըսըն, սակայն եթէ կաղը բուրն կէր, կամաց կամաց այրէր պիտի, և մենք ալ վար իշնալու բռնադատէինք պիտի, որ շատ տհաճելի բան կ'ըլլար։ բայց վախ մ'ունենաք, մեր օդապարիկը ամրախից գոց է։

— Ուրեմն կերակուր ուտենք, ըսաւ Քէննըտի։

— Ահա, պարոնայք, կանչեց ձոյ, ձեզի հետեւելով, անանկ աղէկ սուրճ մը կ'ուզեմ պատրաստել, որ միշտ յիշէք։

— Իրականն ալ այս է, ըսաւ դարձեալ տոքդորը, որ ձոյ, բաց 'ի ուրիշ հազարումէկ առաքինութիւններէ, մասնաւոր տաղանդ մը ունի այդ պանչելի ըմպելին պատրաստելու այլ և այլ նիւթերու խառնուրդով մը, որ ինծի երբեք չէ ուղած սորվեցընել։

— Շատ աղէկ, տէրս, որովհետեւ բոլորովին օդու մէջ ենք, կրնամ ձեզի իմ նուսխայս հաղորդել։ Պարզաբար հաւասարաբաժին խառնուրդ մըն է մօքայի, պուրպօնի և Բիօ-նունէզիսրահից։

Քիչ մը ատեն ետքը երեք սրճի թա-
սեր ճանապարհորդաց ձեռքը կը ծը-
խէին, վերջ տալով անով գոյացական
նախաճաշի մը որուն զիսաւոր համեմը
իրենց զուարթութիւնն եղաւ. յետոյ ա-
մեն մէկը իրենց դիտոլութեանց տեղն
անցան:

Երկիրը վերջի աստիճանի արդասա-
ւոր երևոյթ ունէր: Ծուռումուռ և նեղ
ճամբաններ կանաչազգեստ կամարներու
տակ անյայտ կ'ըլլային: Ծխախոտով,
եփիպտացորենով, գարիով՝ մշակեալ և
լիովին հասունացեալ դաշտաց վրայէն
կ'անցնէին. հոս հոն ընդարձակ որիզի
դաշտեր կը տեսնուէին իրենց շիտակ
բուներովը և ծիրանեզոյն ծաղիկներովը:

— Ոչխարներ և այծեր կը տեսնուէին
ցիցերու վրայ շինած մեծ վանդակնե-
րու մէջ պատսպարած, որ ընձառիւ-
ծին ակուայէն կարենան պատսպարիլ:
Թաւախիտ կանաչութիւն մը սփոռուած
կը տեսնուէր այն շոայլ երկրին երեսը:
Աղաղակներն և ապշութեան տեսարան-
ներ անպակաս էին գեղերու միջէն, ո-
րոնց վրայէն վիկտորիան անցնելու
կ'ըլլար, և տոքդոր ֆէրկըսըն խոհեմա-
բար ինքվինքը նետերու վտանգէն հեռի
կը բռնէր. բնակիչները իրենց կից հիւ-
զերուն չորս դին ժողոված, երկայն ա-
տեն ճանապարհորդները անօդուտ ա-
նէծքներով կը հայհոյէին:

Կէսօրուան դէմ տոքդորը իր աշ-
խարհացոյցը դիտելով, հաշուեց որ Ռւ-
զարամոյ՝ երկրին վրայ պիտոր ըլլար:
Դաշտօրեքը, քոքոյի, բարէյի և բամբա-
կենիի ծառերով հոծ կ'երեսային, որոնց
վրայէն վիկտորիան անցնելով կարծես
թէ կը խաղար: Ճ՛յ այդ բեղմնաւոր
կանաչութիւնը բոլորովին բնական կը
դանէր Ափրիկիոյ նկատմամբ: Քէննըտի
նապաստակ ու լորամարդի կը տեսնէր,
որ միայն հրացանի մը հարուածի կը
սպասէին. սակայն անօդուտ տեղ վա-
ռոգ փճացընելքսել էր, որովհետեւ որսը
առնուլ անկարելի էր:

1 Իւ, ու, այս երկրիս լեզուովը եւիւ կը հշա-
նակէ:

Օդանաւորդը առ ժամ տասուերկու-
մղոն արագութեամբ կը քալէին, ա-
նանկ որ քիչ ատենուան մէջ լայնու-
թեան 38°, 20' թունտա դիւղին վրայ
հասան:

— Հոն տեղուանքն էր, ըսաւ տոք-
դորը, որ Պրդըն և Սրիկ սաստիկ տեն-
դէ բռնուեցան և իրենց արշաւանքին
վերջը կարծեցին տեսնալ: Եւ սակայն
դեռ ևս ծովեղերքէն շատ հեռի չէին,
և 'ի վերայ այսր ամենայնի խոնջութիւնը
և ամեն բանի պակսութիւնը՝ սաստիկ
զգալ սկսեր էին արդէն:

Եւ յիրաւի երկրին այս մասին մէջ
ապականեալ օդը մշտնջենաւորաբար
կը տիրէ. և տոքդորն իսկ անոր վտանգ-
ներէն ազատ մնալու համար հարկ ե-
ղաւ որ օգապարիկը բարձր բռնէ այն
թաց երկրին ապականարար գոլորշի-
ներէն, զորոնք սաստիկ ջերմարել դէպ
'ի վեր կը ձգէր:

Երբեմն կարաւան մը կը տեսնէին՝
որ քրաւալի մը մէջ կը հանգչէր, գիշե-
րուան զովութեան մնալով առաջիկայ
ճամբան շարունակելու: Ասոնք ընդար-
ձակ ցանկապատ միջոցներ են, ուր վա-
ճառականք կ'ապաստանին՝ ոչ միայն
վայրենի գազանաց, այլ և տեղւոյն ա-
ւազակաբարոյ բնակչաց դէմ: Բնիկնե-
րը՝ վիկտորիան տեսնելով աստիս ան-
դին վագելով ցիրուցան կ'ըլլային: Քէն-
նըտի աւելի մօտանց տեսնալ կ'ուզէր
զանոնք. սակայն Սամուէլ միշտ անոր
մտածութեանը հակառակ կը կենար:

— Գլխաւորները հրացանով զինած
են, կ'ըսէր, ու մեր գունտը շատ դիւ-
րին նպատակ մը կրնայ ըլլալ՝ մէջը գըն-
տակ մը նստեցընելու:

— Եւ միթէ գնատակի մը ծակը կրնայ
օգապարիկը վար գահավիժել, հարցուց
Ճ՛յ:

— Անմիջապէս չէ, սակայն քիչ ա-
տենուան մէջ այդ ծակը մեծ պատա-
ռուածք մը կ'ըլլայ, ուսկից բոլոր մեր
կազը կը ցնզի:

— Եթէ այդպէս է ուրեմն ինքվինք-
նիս հեռու բռնենք այդ անկրօններէն:
ի՞նչ կը մտածնեն արդեօք մեզ օգու մէջ

քալել տեսնելով : Վստահ եմ որ մեզ պաշտել կ'ուզեն :

— Թող պաշտեն մեզ , ըսաւ տոքդորը , այլ հեռուանց . այդ կերպով միշտ շահաւոր է : Տեսէք , երկրին կերպարանքը կը փոխուի . գեղերը հետզհետէ կը նոռազին . մանկիէ ծառերն ալ չեն տեսնուիր . ալ այս լայնութեանս տակը բուսնիլ չեն կրնար : Գետինը հետզհետէ լեռնային կը փոխուի ու մօտ լեռներ գուշակել կու տայ :

— Եւ յիրաւի , կանչեց քէննըտի , կարծես թէ բարձր բան մը կը տեսնեմ այն կողմէն :

— Արևմտեան դին Ուրիշարայի առաջին շղթաներն են , Տութումի լեռն անշուշտ . որուն ետեր կը յուսամ ապաստանելու , որ գիշերն անցընենք : Բոցարծարծը քիչ մը աւելի սաստկացընել կ'ուզեմ . հինգ կամ վեց հարիւր ոտք բարձրութեամբ բռնադատուած ենք քալելու :

— Շատ պքանչելի մտածութիւն մըն է ունեցածդ , պարոն , այդ բանիդ համար , ըսաւ ձոյ . գործը ոչ դժուարին է և ոչ յոգնեցուցիչ , բաւական է ծորակ մը դարձնել , ամեն բան ըստ կարգի կ'ըլլայ :

— Ահաւասիկ աւելի հանդիստ ենք հիմա , ըսաւ որսորդը՝ երբ գունտը բարձրացաւ . արեւուն ճառագայթից անդրադարձութիւնը այդ կարմիր աւազին վրայէն՝ անտանելի կ'ըլլար :

— Ի՞նչ պքանչելի ծառեր , կանչեց ձոյ . թէպէտ շատ բնական , շատ գեղեցիկ է : Տասուերկու հատ մը բաւական են անտառ . մը ձևացընելու համար :

— Ատոնք պաօպապ են , պատասխանեց տոքդոր Ֆէրկըմըն . նայեցէք , ահա մէկ մը՝ որուն բունը հարիւր ոտք շրջապատ կրնայ ունենալ : Գուցէ նոյն այդ ծառին ոտքն է որ սպաննուեցաւ Մէզան Գաղղիացին 1845ին , վասն զի Տըժը-լա-Մօրա գիւղին վրայ ենք , ուր մինակ ուղեց երթալ . այդ երկրին դաղանաբարոյ գլխաւորը զինքը բռնելով , պաօպատի մը ոտքը կապեց , ու ծանր ծանր կերպով անոր յօդուած .

ները կտրեց մինչդեռ պատերազմական երաժշտութիւնը հնչեցընել կու տար . յետոյ կոկորդը կտրեց , կանկ առաւ մէյմը իր բթացած դանակը սրելու , ու դեռ չկտրած թշուառին գլուխը փըրցուց հանեց : Այդ դժբաղդ գաղղիացին քսանուվեց տարուան կար :

— Իսկ Գաղղիան այդպիսի եղեռնագործեան վրէժը չառաւ , հարցուց Քէննըտի :

— Գաղղիան բողոքեց . Զանզիպարի սայիտը կրցածն ըրաւ՝ որ սպաննողը ձեռք բերէ , այլ չյաջողեցաւ բան մը ընելու :

Կը խնդրեմ որ ճամբան կանկ չառնունք , ըսաւ ձոյ . բարձր ելլենք , տէրս , բարձր ելլենք , եթէ ինծի մտիկ կ'ընես :

— Այնչափ աւելի յօժարակամ , ձոյ , որ Տութումի լեռն ալ առջևնիս կը կանգնի : Եթէ ստոյդ են հաշիւներս , երեկոյեան ժամը եօթէն առաջ անցնինք պիտի զայն :

— Գիշերը չպիտի ճանապարհորդենք , հարցուց որսորդը :

— Զէ , կարելի եղածին չափ . զգուշութիւններով և արթնութեամբ , անվըտանգ կը կատարենք ճանապարհորդութիւննիս . սակայն բաւական չէ միայն Ափրիկէն անցնիլ , զինքը տեսնալու ալ է :

— Ձայս վայր ցաւելու բան մը չունինք , տէրս : Փոխանակ անապատի մը , աշխարհիս ամենէն աղէկ մշակեալ և ամենէն բարգաւաճ երկիրը տեսանք : Հաւտաւ ուրեմն աշխարհագրաց :

— Սպասենք , ձոյ , սպասենք , քիչ մը ետքը կը տեսնենք :

Երեկոյեան ժամը վեց ու կիսուն ատենները վիկտորիան Տութումի լերան դիմացը գտնուեցաւ . զայն անցնելու համար հարկ եղաւ երեք հազար ոտքէ աւելի բարձր ելլել , և այս բանիս համար տոքդորը ուրիշ բան չունէր ընելու եթէ ոչ բարեխառնութիւնը տասնեսութ աստիճան բարձրացընել¹ : Լինայ զուրցուիլ որ իրապէս գունար ձեռքի վրայ

կը կառավարէր։ Քէննըտի յաղթելու
արդեքները անոր կը նշանակէր, և վիկ-
տորիան օդու մէջ կը թռչէր՝ լերան
քովէն քերելով։

Ժամը ութին լերան միւս կողմը կ'իջ-
նէր, որուն զառ՝ ի վայրը աւելի հեշտ
էր. խարիսխները նաւակէն դուրս նե-
տեցին, և անոնցմէ մէկը յաղթ նովիա-
լի մը ճիւղերուն հանդիպելով, ամուր
մը անոնց կոռւեցաւ։ Անմիջապէս ձոյ
շուանին վրայէն սահելով ամուր մը
գնաց հաստատեց զայն։ Ապա մետաքսէ
սանդուղը իրեն նետելով՝ արագաբար
նորէն գունտը ելաւ։ Անանկով օդա-
պարիկը արևելեան հովերէն ապահով-
ցած՝ գրեթէ անշարժ կը կենար։

Երեկոյեան ընթրիքը պատրաստելու
եղան. ճանապարհորդք իրենց օդային
պտոյտէն գրգռեալ, իրենց պաշարնե-
րուն վրայ աղէկ խրամ մը բացին։

— Ի՞նչ ճամբայ ըրինք այսօր, հար-
ցուց Քէննըտի խոշոր պատառնէր կըւ-
լելով։

Տոքդորը լուսնի դիտողութիւննե-
րով ճամբան ստուգեց, քննելով նաև
այն գրանչելի աշխարհացոյցը՝ որ իրեն
իրք առաջնորդ կը ծառայէր. այդ աշ-
խարհացոյցը « Նորագոյն զիւտք յԱ-
փրիկէ » ատլասին կը վերաբերէր, զոր
իր գիտուն բարեկամը Բէղերման կոթա
հրատարակած էր, և իրեն ընծայ զըր-
կած էր։ Այդ ատլասը տոքդորին բոլոր
ճանապարհորդութեանը ծառայէր պի-
տի, վասն զի Պըրդընի ու Սրիքի դէպ
՚ի մեծ լիճերը նախագիծ ուղերութիւ-
նը կը բովանդակէր, Սուտանը՝ ըստ տոք-
դոր Պարթի, Ստորին Սէնէկալը ըստ
Գուլիէլմոս Լըժանի, և Նիճէրի տէլդան
ըստ տոքդոր Պէքիի։

Ասկէ զատ Ֆէրկըսըն մասնաւոր գիրք
մըն ալ հետը առած էր, որ Նեղոսի
վրայ եղած բոլոր ծանօթութիւնները
մէկի վերածած կը բովանդակէր, այսու
մակագրաւ. « Ակունք Նեղոսի, որ է
ընդհանուր ստորագրութիւն այնը գե-
տոյ և յորդութեան նորին, հանդերձ
Նեղոսեան գիւտոյն, ՚ի կարոլոս Պէքէ,
Թ. Տ. »

Նաև « լոնտրայի աշխարհագրական
ընկերութեան յիշատակագրութեանց »
մէջ հրատարակած հոչակաւոր աշխար-
հացոյցներն ալ ունէր հետը, անանկ որ
ծանօթ երկիրներուն կէտ մըն ալ աշ-
քէն չփախչէր պիտոր։

Աշխարհացոյցին վրայ իր հաշիւներն
ընելով, գտաւ որ իր դէպ ՚ի լայնու-
թեան ճամբան, երկու աստիճան էր,
կամ հարիւր քսան մղոն դէպ ՚ի արե-
մուտք¹։

Քէննըտի դիտեց որ ճամբան դէպ ՚ի
հարաւ կը խոտորէր։ Սակայն տոքդորը
գոհ էր այս ճամբուն, որ կարելի եղա-
ծին չափ իրմէ յառաջնժայներուն
հետքը քննել կ'ուզէր։

Որոշեցին գիշերը երեք մասն բաժնե-
լու, որպէս զի ամեն մէկը միւսներուն
պահպանութեանը կարենայ հսկել։
Տոքդորը իններորդ ժամուն մասն ըն-
տրեց, Քէննըտի՝ կէս գիշերունը, իսկ
ձոյ՝ առաւօտեան երրորդ ժամունը։

Ուստի, Քէննըտի և ձոյ՝ իրենց ծած-
կոցներուն մէջ պլուելով, վրանին տա-
կը տարածուեցան ու հանդարտաբար
քուն եղան, մինչդեռ տոքդոր Ֆէրկը-
սըն կը հսկէր։

Կը շարունակոի։

Պ Ի Ա. Ր Ի Ց

Ստորին Պիւրենեայց նահանգին մէջ
Պիարից պվտի գեղ մըն է, կավոնիոյ
ծոցին վրայ շինուած, և Պայոնէն գրե-
թէ ութ հազարամեղր հեռաւորու-
թիւն ունի։ Բարձր գիրքի վրայ կան-
դնած է, ծովու երեսէն երեսուն մեղրի
չափ բարձրութիւն ունենալով։

Այս գեղիս ճամբաւը ոչ միայն ա-
ռողջարար օդէն է, այլ և անոր հոչա-
կաւոր բաղանկիներէն, որոնց համար
բազմութիւն մը օտարականաց խուռն
կ'ընթանան հոն անոնց առողջարար
աղդեցութիւնը վայելելու։

1 Յիսուն փարսախ։